

խարհային կոմունիստական ու բանվորական
շարժման նոր հաղորդությունների համար:

Մեծ Լենինի աշխատությունների այս ժողովածուն հասու գնեք է տալիս բոլոր հետևողա-

կան մարքսիստների ձեռքը՝ ունի գինիզմի գա-
ղափարական չափախման գործում:

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Ս. ՊԱԼԱԹՈՆ, ՍովետաՏայ գրականություն, Լաբաքիա, 1958:

Սփյուռքահայ գրականագիտական միտքը, դժբախտաբար, մինչև օրս չի տվել ժառանգա-
կալից արևմտահայ գրականության և ոչ էլ
սովետահայ գրականության բիշ թե շատ հե-
տևողական գիտական լուրջ վերլուծումը կամ
պատմությունը:

Հակոբ Օշականի «Հայ գրականություն»
գրքում ժամանակին կատարած ծամածուծություն-
ները ընթերցողի մոտ միայն ժպիտ կարող են
առաջացնել: Որքան էլ հեղինակը ջանում է այդ
աշխատության մեջ ընդունել լուրջ գիտականի
կեցվածք, այնուամենայնիվ նրա անախոս դա-
տողությունները մատնում են սեմինարիստ
վարժապետի իր գավառականությունն ու ունայ-
նամտությունը:

Նույնքան զավեշտական են Հ. Օշականի սո-
վետահայ գրականությունը արժեքազրկելու,
ոչնչացնելու գոնքիշոտյան ջանքերը. հետագա-
յում նրա կատարած վայրիվերո «դատումների»
մեջ, իր ուսուցչին փորձեց գերազանցել սովե-
տահայ գրականությունը ջախջախելու միոսոսա-
յին իր ձեռնածվությամբ նաև Մ. Թեոդորով-
յանը¹:

Սփյուռքահայ պարբերական մամուլում
եղել են բազմաթիվ բարեխիղճ հոդվածներ՝
նվիրված սովետահայ գրականությանը կամ նրա
առանձին գործիչներին: Լույս է տեսել նաև
Ա. Նազարյանի «Սովետահայ գրականության
հատկանիշները» գրքույկը²: Սակայն այդ ամե-
նը կամ մասնակի հարցեր շոշափող, կամ թե
գրական-հրապարակախոսական բնույթի գոր-
ծեր են: Սփյուռքահայ շատ գրողներ ու գրա-
կանագետներ, ինչպես նաև դրասեր-հրապարա-
կախոսներ, երբեմն նույնիսկ մարքսիստական
մտածողությունից շատ հեռու կանգնած մար-
դիկ, անկեղծորեն ձգտել են ինքնուրույն կեր-

պով ըմբռնել սովետահայ գրականության զար-
գացման ընթացքն ու նրա առանձնահատկու-
թյունները: Շատ հաճախ այդպիսի հեղինակ-
ների հոդվածներում կարելի է գտնել ճիշտ և
արժեքավոր դիտողություններ:

Բառի լայն առումով գիտական խորը հետա-
զոտություն չէ նաև Ս. Պալաթոնի գրախոսվող
աշխատությունը: Հեղինակը գրականության
մասնագետ-պատմաբան չէ և գրականության
պատմությամբ, որպես հետազոտող, չի զբաղ-
վել առհասարակ: Գրականության պատմու-
թյունը նրան զբաղեցրել է սոսկ որպես գրասիրի
և գրականության դասատուի: Նրա այս աշխա-
տությունը սովետահայ գրականության հան-
րածանոթ փաստերը ամփոփելու, սխտեմալո-
րելու, այն մատչելի ձևով մի գրքույկի մեջ շա-
րադրելու փորձ է միայն:

Ինչպես կարելի է հետևել գրքի առաջա-
բանից, շատ համեստ խնդիր է առաջադրել
իրեն հեղինակը. «Մատայնու... հայ գրողներու
ժողովրդականացման սրբազան գործին», կամ
«արտասահմանի մեջ, ներկայացնելու հայրենի
գրականությունը փորձիկ հատարով մը, որուն
պահանջը վաղուց հետե կը զգացվեր մեր դրպ-
րոցական հաստատությանց և գրականությամբ
հետաքրքրվող շրջանակներուն մեջ»:

Ներկա հատորում ներկայացված են սովե-
տահայ գրականության թանաքստեղծություն և
թատերագրություն» բաժինները:

Սովետահայ բանաստեղծության զարգացու-
մը հեղինակը բաժանել է երեք շրջանի: Առա-
ջինը՝ 1922—1930 թթ., երկրորդը՝ 1930—
1941 թթ. և երրորդը՝ 1941—1954 թթ.: Սովե-
տահայ գրականության նման պարբերացումը
(պերիոդիզացիան) իհարկե շատ հեռու է գի-
տական և ճշգրիտ լինելուց, սակայն այս դեպ-
քում չենք կարող խստապահանջ լինել հեղինա-
կի նկատմամբ, քանի որ սովետահայ գրակա-
նության պատմության, ինչպես և առհասարակ
մեր գրականության պատմության պարբերաց-
ման հարցը դեռևս վեճի առարկա է նաև սովե-
տահայ գրական պատմագրության մեջ: Մա-

¹ Տե՛ս Հ. Օշական, Հայ գրականություն, Երուսաղեմ, 1942:

² Տե՛ս Ա. Թեոդորովյան, Դար մը գրակա-
նություն 1850—1950, հ. Բ, էջ 289—317,
Կահիրե, 1956:

³ Տե՛ս Ա. Նազարյան, Սովետահայ գրա-
կանություն հատկանիշները և հայ ժողովրդի
միասնականությունը, Փարիզ, 1954:

¹ Ս. Պալաթոն, Սովետահայ գրականու-
թյուն, էջ 5:

նավանդ, եթե նկատի ունենանք, որ հեղինակը ինքը ևս գիտական ճշգրտություն չի հետապնդել այդ պարբերացումով, այլ նպատակ է ունեցել ճշմարտության գրականության պատմությունը ներկայացնել տասնամյակներով, գյուրացնելու համար բնթերցողի գործը:

Յուրաքանչյուր շրջանին որպես նախաբան հեղինակը տալիս է սովետահայ գրականության տվյալ շրջանն ու նրա առանձնահատկությունները բնորոշող մի ընդհանուր տեսություն-ակնարկ, որից հետո մենագրական փոքրիկ բաժիններով ներկայացված են մեր աչքի ընկնող բանաստեղծները: Այսպես, առաջին բաժնում էան մենագրական ակնարկներ բանաստեղծներ Ազատ Վշտունու, Գևորգ Արովի, Եղիշի Զարենցի, Նաիրի Զարյանի, Սարմենի, Գեղամ Սարյանի, Վահրամ Ալազանի, Գուրգեն Մահարու, Վաղարշակ Նորենցի, Սողոմոն Տարոնցու մասին (թվարկումը բերում ենք նույն կարգով, ինչպես տրված է գրախոսվող գրքում): Երկրորդ բաժնում ներկայացված են Խաչիկ Դաշտենցը, Աղավնին, Մարո Մարգարյանը, Աշոտ Գրաշին, Հովհաննես Շիրազը, Գուրգեն Բորյանը, Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը: Երրորդ շրջանը ներկայացված է միայն ընդհանուր տեսությամբ: Սենագրական բաժիններում հեղինակը ձգտել է սովետահայ առանձին գրողների ներկայացնել ոչ միայն իրենց բանաստեղծական գործերով, այլև ըստ հնարավորին տալ տվյալ գրողի ստեղծագործական ամբողջական կերպարը՝ բնթերցողներին ծանոթացնելով նրանց արձակ և դրամատիկական գործերի հետ ևս:

Ս. Պալաթունը սովետահայ գրականության չեմը և նվիրված բարեկամներից է: Բարեխիղճ կերպով հետևել է նա սովետահայ գրականության զարգացման ընթացքին: Միանգամայն, ճիշտ պատկերացում ունի նրա ընդհանուր ուղղության և հիմնական բնորոշ գծերի մասին. «...Սովետահայ գրականության անաչառ պատմաբանը կը տեսնե, — գրում է նա, — որ այդ գրականության շրջանն անընդհատ կաճի ու կը հարստանա նոր երկերով, որ այդ գրականության ընդգրկած ազգային և հեղափոխական վարքագիծը կը համապատասխանե հայ ժողովրդի դարավոր տենչերուն և երազանքին»: Կամ «Սովետական գրականության համար բնորոշն ու տիպական անոր ժողովրդային բնույթն է, ժողովրդի շահերուն ծառայելու ձգտումը: Ժողովուրդը միշտ ներկա է այս գրականության մեջ: Սովետական գրականու-

թյունն արդիական է իր ընդգրկած իրապաշտական ուղղությամբ և կյանքի ընկալման ձևերով»: Սակայն երբ հարցը վերաբերում է զարգացման այդ պրոցեսի առանձին մանրամասնություններին կամ նրա տեսական հարցերին, հեղինակը հաճախ ընկնում է թյուրիմացությունների մեջ և որոշ տուրք է տալիս ոչ ճիշտ, հակագիտական տեսակետներին:

Որքան էլ որ միտումնավոր չլինեն այդ մեկնաբանումները և անգամ բարի ցանկությամբ գրված, այնուամենայնիվ, սխալը մնում է սխալ և կարող է թյուրիմացությունների տեղիք տալ, ուստի հարկ ենք համարում մի փոքր մանրամասն կանգ առնել այդ հարցերի վրա:

Սովետահայ գրականությունը միանգամայն նոր երևույթ է, նոր որակ, զարգացման մի նոր աստիճան բազմադարյան հայ գրականության պատմության մեջ: Այն ծնունդ է առել Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի համար մղված մարտերի բովում և իր գաղափարայնությամբ ու բովանդակությամբ ամբողջովին կապված է սոցիալիստական նոր աշխարհի հետ: Այն ճշմարտացիորեն պատկերաց մարդկության պատմության մեջ, այդ թվում և հայ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցող մեծ, աշխարհացունց իրադարձությունները՝ ամեն տեսակի շահագործական լծից ու բռնությունից մարդկության ազատագրման ռեվոլյուցիոն պրոցեսը, մարդկային հասարակարգի վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով:

Սովետահայ գրականությունը ոչ միայն արտացոլեց, այլև իր զարգացման ընթացքում ինքը ևս ապրեց սոցիալական նոր հասարակարգի կառուցման ճանապարհին կանգնած գծվարին ու բարդ, հաճախ հակասական պրոցեսները:

Սովետահայ գրականությունը ամբողջ սովետական, ինչպես և սոցիալիստական գրականության մի անբաժանելի օղակն է, և բնական է, որ նրա զարգացման պրոցեսը սերտորեն կապված է այն մեծ, դժվարին ու սրված քաղաքական և իդեոլոգիական պայքարի հետ, որ տեղի է ունենում ժամանակակից աշխարհում: Այն սուր բախումները, որ մշտապես տեղի են ունենում դրամատիկական աշխարհում սովետական և սոցիալիստական գրականության շուրջը, հավասար չափով վերաբերում են նաև սովետահայ գրականությանը:

¹ Ս. Պալաթուն, Նշվ. աշխ., էջ 13:

² Նույն տեղում, էջ 121:

¹ Ս. Պալաթուն, Նշվ. աշխ., էջ 17:

Միջազգային հետադիմությունը լավ գիտակցելով, թե ինչ խոշոր ուժ է սոցիալիստական գրականությունը աշխատավորական զանգվածների հոգևոր կերպարի ձևավորման, նրա գիտակցության դաստիարակման գործում, մըշտապես ձգտել է խափանել աշխատավորների մտավոր զարգացման այդ խոշոր ազդակը, վարկարեկել սովետական գրականությունը՝ նրա ազդեցության ուժը թուլացնելու համար:

Մտավոր ստրկացման այդ թույլը ամեն օր այնպիսի ահավոր շափերով է մատուցվում միջազգային հետադիմական մամուլի ու ռադիոյի միջոցով, որ անկախ իր բարի նպատակներից, գրախոսվող մեր հեղինակը՝ Ս. Պալաթոնը որոշ չափով ենթարկվել է նրանց ազդեցությանը և երբեմն կրկնում է այն բնորոշումներն ու բնութագրումները, որոնք գալիս են թշնամական ճակատից:

Այսպես օրինակ, գրքի տարբեր էջերում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի բնորոշումների, ինչպես՝ «վերացական և ճառային բովանդակություն» կամ «պարտադիր անվանացանկի կիրարկում», կարծես թե ինչ-որ մի օրգան վերուստ անպայման թելադրում է մեր գրողներին իրենց գործերի մեջ պարտադիր կերպով մտցնել որոշ գործող անձանց, և նրանք հարկադրված են այդ կատարել. դրա հետևանքով իբր «...տուժած են նաև Հրաչյա Քոչարի, Գարեգին Սևունցի, Հմայակ Սիրասի, Վիգեն Խելույանի, Անահիտ Սահյանի վեպերը, որոնք խճողված են բազմաթիվ երկրորդական հերոսներով, օտար անուններով...»:

Մեր գաղափարական հակառակորդները, մանավանդ ժամանակակից ռեիզիոնիստները, գերմարդկային ճիգեր են թափում աղավաղելու համար գրականության պարտականության լեռնային տեսությունը, այն ներկայացնելու որպես գեղարվեստական ստեղծագործության համար խորթ դիրեկտիվ ցուցմունքների մի սխստեմ: Իբրև թե սովետական գրականությունից պահանջվում է իրական կյանքի փոխարինումը գունդեղումով և պատրաստի սխեմաներով, իրականության պատկերների մտացածին-դեկլարատիվ ձևակերպումով: Իհարկե պարտադիր անվանացանկի կիրարկման իր այս բանաձևումը Ս. Պալաթոնը մեխանիկորեն վերցրել է մեր գաղափարական հակառակորդների այդ գինանոցից և այն խորթ է ու անհարիր սովետահայ գրականության էությանը:

Հաճախ էլ մեր այդ նույն գաղափարական հակառակորդները, սովետական գրականությունը վարկաբեկելու համար, որպես նրա լա-

վագույն նմուշներ ներկայացնում են գորշ, միջակ և միջակությունից էլ ցած գործերը, կամ ամեն տեսակի սխալ տեսական դատողություններն ու վրիպումները համարում են նրա համար բնորոշ գծեր ու առանձնահատկություններ:

Ենթարկվելով այդ նույն մտայնությանը, Ս. Պալաթոնը սովետահայ գրականության զարգացման առաջին շրջանի համար բնորոշ գիծ է համարում հետևյալը. «Առաջին շրջանի գրողները, բանաստեղծական պատկերացման համար կօգտագործել են երկաթը, պողպատը, պղինձը, մագնիսը, շոգին, մարդ-զանգվածը—իբրև ստեղծագործական ներշնչության: Շատ բնական է, որ այս մետաղային տարրերն և անկերպարանք մարդ-զանգվածն ծնունդ առնեն միապաղաղ ու մակերեսային քնարերգություն մը, ճառային բանաստեղծություն մը, որ չէր հուզեր ընթերցողը, չէր շարժեր անոր քղերը, չէր բողավառեր անոր սիրտը»:

Իհարկե, սովետահայ գրականության զարգացման որոշումների շրջանում գրողները տարվել են որոշ չափով նաև մարդ-զանգվածով և երկաթի ու պողպատի գովերգմամբ: Սակայն այսօր, երբ այդ զարգացման պատմությունն ենք հանրագումարի բերում, ապա միանգամայն պարզ է, որ այդ ժամանակավոր ու մասնական մոլորությունը չի կազմում զարգացման այդ շրջանի բնորոշ գիծը և բնավ չի կարելի այնպիսի արտառոց հետևության հանգել, թե «...ծնունդ կառնեն միապաղաղ ու մակերեսային քնարերգություն մը...»: Բնականաբար հարց է ծագում՝ հապա ո՞ր մնացին Հ. Հակոբյանի, Եղ. Չարենցի, Գ. Մահարու, Ն. Զարյանի, Ազ. Վշտունու, Գ. Սարյանի և ուրիշների քանական թվականներին գրած հոյակապ քնարական գործերը, որոնք մեկընդմիջում մտել են մեր դասական գրականության ոսկյա ֆոնդի մեջ: Զէ՞ որ ամեն մի օբյեկտիվ դիտող և այդ պատմությունը ուսումնասիրող չի կարող չասել, որ մեր գրականության անցյալ շրջանի ոչ մի տասնամյակ այնքան բեղմնավոր չի եղել բարձր քնարական բանաստեղծության արտադրանքով, որքան հատկապես ներկա դարի քանական թվականները:

Հստակ չեն մեր հեղինակի պատկերացումները նաև սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի բնութագրման, ինչպես նաև նրա սկզբնավորման ժամանակի մասին:

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի սկզբնավորումը սովետահայ գրականության մեջ Ս. Պալաթոնը համարում է 1930 թվականը, իսկ

¹ Ս. Պալաթոն, նշվ. աշխ., էջ 86:

¹ Ս. Պալաթոն, նշվ. աշխ., էջ 14:

ն. Զարյանի «Ռուլանի քարափ» պոեմը այդ մեթոդով գրված առաջին գործը. «...այս երկարաշունչ պոեմը ոչ միայն ն. Զարյանի, այլև ողջ սովետահայ գրականության համար ունի շրջադարձային նշանակություն: Այս պոեմը սովետահայ գրականության առաջին երկն է, որ գրված է սոցիալիստական ռեալիզմի մեթոդով»¹, — գրում է հեղինակը:

Եթե մի րոպե համաձայնենք հեղինակի այս սխալ կարծիքի հետ, բնականաբար պիտի հարց տանք, հասկա ստեղծագործական ի՞նչ մեթոդով են գրված Հակոբ Հակոբյանի «Նոր առավոտ» և «Բուլեիկ է Շիր-կանալը» պոեմներն ու բազմաթիվ բանաստեղծությունները, Եղ. Զարենցի «Ամենապոեմը», «Ստամբուլը» «Մաճկալ Սաքոյի պատմությունը», լենինյան պոեմների հոյակապ ցիկլը, «Եփեկական լուսաբացը» և բազմաթիվ այլ գործեր, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ա. Բակունցի և շատ ու շատ սովետահայ այլ հեղինակների, այդ թվում նաև իր՝ ն. Զարյանի քանակական թվականների գրած գործերը:

Այսպիսի պնդումը ինքնին արդեն ցույց է տալիս, որ հեղինակը աղոտ պատկերացում ունի սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի մասին առհասարակ: Այդ են վկայում նաև նրա՝ նույն հարցի վերաբերյալ ունեցած այլ դատողությունները: Այսպես օրինակ, Ս. Պալաթոնը մի այլ տեղ հետևյալ բնութագրություն է տալիս ստեղծագործական այդ մեթոդին. «Սոցիալիստական ռեալիզմի մեթոդը ստեղծված է անցյալի դասական գրականության լավագույն ավանդույթներին և մարքսիստական աշխարհայացքի միաձուլումեն»²:

Այս բնութագրումը գուցե որոշ ճշմարտություն ունի իր մեջ, սակայն այն շատ պարզունակ ու միակողմանի պատկերացում է տալիս, և, ըստ էության, գեհնակացված ձևով է ներկայացնում ստեղծագործական այն մեթոդը, որ գրականության ռեալիստական ուղղության մի նոր, բարձր աստիճանն է հանդիսանում: Մարքսիստական աշխարհայացքը, իհարկե, օգնում է սովետական գրողներին ճիշտ ըմբռնել ու ճանաչել պատմության շարժիչ ուժերը, ժողովրդական զանգվածների և դասակարգերի դերը երկրների ու ժողովուրդների ճակատագրում, ճիշտ մեկնաբանել խոշոր հասարակական երևույթների իսկական պատճառներն ու շարժառիթները և հետևապես, ավելի խոր ու բազմակողմանիորեն բացահայտել կյանքի ճշմարտությունը: Սակայն այդ ամենը դեռ քիչ է ստեղծագործական նոր մեթոդի բնույթի բնութագրման համար:

Սոցիալիստական ռեալիզմի բնութագրման համար:

Սոցիալիստական ռեալիզմը կոչված է կյանքի նոր պայմաններում շարունակելու անցյալի ռեալիստական արվեստի առաջադիմական լավագույն ավանդույթները: Սակայն այդ նոր պայմանները, նոր խնդիրներ են առաջադրում գրականությանը: Հետևապես սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդը ոչ թե մեխանիկորեն է շարունակում այդ ավանդույթները, այլ զարգացնում ու խորացնում է դրանք նոր պայմանների համաձայն: Սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի համար հիմնական սկզբունք է դառնում արդեն ոչ միայն կյանքի ճշմարտացի պատկերումը, այլև այդ կյանքը պատմական կոնկրետ իրականության մեջ դիտելը և այն իր զարգացման ռեալիստիկական բնույթի մեջ պատկերելը: Իսկ նրա կարեորագույն խնդիրներից մեկն էլ դառնում է ժողովրդական լայն զանգվածների կոմունիստական դաստիարակման գործը:

Սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի կարևոր նախադրյալներից մեկն էլ մարդու պատկերումն է իր աշխատանքային, հասարակական գործունեության և անհատական կյանքի միասնության մեջ, որովհետև այդ միասնության մեջ է, որ հանդես է գալիս ինչպես կոմունիզմի համար մարտնչող այսօրվա մարդը, նույնպես և կոմունիստական հասարակարգի գալիք երջանիկ սերունդը: Հետևապես, այժմեականության պատկերումը սերտորեն միաձուլվում է գեպի գալիքը սովետական մարքսիստական լավագույնության՝ ռեալիստիկական ուժանիտիկայի հետ: Սոցիալիստական ռեալիզմի արվեստի մեջ հասարակական ձգտումների այսօրվա մարտականությունը դառնում է հիմք՝ այդ նույն արվեստի մեջ ռեալիստիկական ուժանիտիկայի զարգացման համար:

Սոցիալիստական ռեալիզմի արվեստը գիտակցաբար իրեն խնդիր է առաջադրում պատկերել նորի հաղթանակը այն ամենի հանդեպ, ինչ հին է, ենթակա մահացման: Դրանով է արդեն, որ այդ արվեստը համակված է կենսահաստատ ուժով, պատմական լավատեսությամբ, և նրա համար միանգամայն խորթ են ամեն տեսակի հոռետեսությունն ու անկումայնությունը: Այդ արվեստը իր ոգեշնչումը ստանում է կոմունիզմի հաղթանակի անհողողող հավատից, ինչպես և այն խորը համոզումից, որ հնարավոր է և պետք է ստեղծել մարդկային միանգամայն նոր հարաբերություններ:

Սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդը մուտք է գործել մեր կյանքի մեջ ոչ թե 30-ական թվականների սկզբներին,

¹ Ս. Պալաթոն, Նշվ. աշխ., էջ 132:

² Նույն տեղում, էջ 78:

ինչպես այդ ներկայացնում է Ս. Պալաթոնը, այլ բուռացիորեն ներկա դարիս սկզբում: XIX դարի վերջերին արդեն, երբ համաշխարհային կապիտալիզմը թևակոխեց իր զարգացման իմպերիալիստական փուլը, սկսվեց գրականության և արվեստի տրոհման շրջանը: Գրականության մեջ մի կողմից առաջ եկան անկումային, միստիկական, դեկադենտական, ձևապաշտական բուրժուական զանազան ուղղությունները, իսկ մյուս կողմից սկսեցին թափանցել և հաստատուն տեղ գրավել սոցիալիստական գաղափարները:

Ֆրանսիական ականավոր գրող Ռոմեն Ռոլանը 1895—1897 թվականներին արդեն գրում էր իր օբյեկտիվ. «Քանի ավելի եմ թափանցում սոցիալիզմի ճշմարտության մեջ, անսահման ուրախությունը համակում է ինձ... ՆՅ՝ կա մի որևէ հույս խուսափել այն կործանումից, որը սպառնում է ժամանակակից Նվրոպային, նրա հասարակությանը, նրա արվեստին, ապա այդ հույսը գտնվում է սոցիալիզմի մեջ: Միայն նրա մեջ եմ ես դիրսում կյանքի սկզբնավորումը... Հարյուր տարվա ընթացքում Նվրոպյան կղանա սոցիալիստական կամ կղադարի գոյություն ունենալուց»¹:

Անցյալ դարի վերջերին համաշխարհային ռեյուցիոն շարժման կենտրոնը դարձավ Ռուսաստանը, և բնական է, որ հենց այնտեղ ծնունդ առավ ստեղծագործական նոր մեթոդը: 1905 թ. ռուսական առաջին ռեյուցիայի բողոքում ծնվեց սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդը, որի ստեղծողը հանդիսացավ ռուս մեծ գրող Մ. Գորկին:

Հայ իրականության մեջ նույն տարիներին իր ինքնուրույն ճանապարհներով ստեղծվեց այդ նույն մեթոդը: Հ. Հակոբյանը 1905 թվականին գրում էր.

Հե՛յ, ձեզ մատաղ բանվոր տղերք,
Մե՛կ էլ, մե՛կ էլ, մի զարկ տվեք.
Մի զարկ տվեք ցարի դահին,
Որ խորտակվի նա հիմնովին²:

Դրանով նա արդեն հայ գրականության մեջ հիմք էր դնում գեղարվեստական ստեղծագործական նոր մեթոդին՝ սոցիալիստական ռեալիզմին: Հետևապես սոցիալիստական ռեալիզմը կյանքի է կոչվել որոշակի հասարակական պայմանների և հենց արվեստի զարգացման ներ-

քին օրինաչափությունների շնորհիվ: Սոցիալիստական ռեալիզմը կենդանի, զարգացող մեթոդ է, որի էական նորարարական հատկություններից մեկն էլ հանդիսանում է հասարակության՝ դեպի կոմունիզմ ընթացող շարժման ընդարձակ ու ճշմարտացի պատկերումը, ինչպես նաև պատմության իսկական կերտողների՝ ժողովրդական լայն զանգվածների պատկերումը, որպես պատմության գլխավոր, որոշիչ ուժի:

Ի տարբերություն ժամանակակից բուրժուական արվեստի՝ ամեն տեսակի մոդեռնիստական, արստրակցիոնիստական արվեստի ներկայացուցիչների, որոնք այսպես կոչված «արվեստի ազատության» կեղծ ֆորմուլով ձգտում են արվեստը կտրել հասարակությունից, բանականությունից, կյանքից, ստեղծել թյուրօրինակ կեղծ, գաղափարաբեկ գործեր, սոցիալիստական ռեալիզմի արվեստի նեոկոլացիոնիզմի իրենց ուղադրությունը կենտրոնացնում են կյանքի, մարդկանց, հասարակական հարաբերությունների շուրջը: Նրանք պատկերում են ոչ թե երեուլթների արտաքին, մակ'ընթացյալ դժբեր, այլ նրանց խորքային պրոցեսները, կենսահաստատություն, ճշմարտության և գաղափարայնության մեջ են տեսնում արվեստի ուժը:

* * *

Սխալ են նաև Ս. Պալաթոնի բժշկամեթոդներ ու պատկերացումները սոցիալիստական գրականության և առհասարակ արվեստի դերի մասին. «Արվեստի պաշտոնն ալ ալ բան չ', բայց եթե կյանքի անողոր քննադատություն»³, գրում է նա: Այս հարցը ես պետք ունի մի փոքր մեկնաբանման:

Ռեալիստական ամեն մի արվեստ ծառայում է օրյեկտիվ իրականության գեղարվեստական իմացությանը և նրա ճշմարտացի վերարտադրությանը: Անցյալ դարի առաջագիծ ռեալիստ գրողներն ու արվեստագետները լուրջ հակասության մեջ գտնվելով տիրող սոցիալական իրավակարգի հետ, բնականաբար, անհրաժեշտ էին գտնում կյանքի ճշմարտության այնպիսի պատկերումը, որը նպաստեր տիրող բուրժուական հասարակարգի գաղափարական ու բարոյական հիմունքների խաթմանը, նրա հակասությունների մերկացմանը: Այդպիսով առաջ եկավ ռեալիստական արվեստի մի նոր ուղղություն՝ քննադատական ռեալիզմը, որ, իրոք, իր գլխավոր խնդիրն էր համարում «կյանքի անողոր քննադատություն»⁴: Այսօր քննադատական ռեալիզմի խնդիրները նույնաց-

¹ P. Ролан, Собрание сочинений, Москва, 1958, т. 14, էջ 12:

² Հ. Հակոբյան, Նրկեր, Երևան, 1951, էջ 63:

³ Ս. Պալաթոն, Նշվ. աշխ., էջ 86:

նեւ սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի հիմնական հարցերի հետ ոչ միայն չի կարելի, այլև կոպիտ սխալ կլինի, որովհետև սոցիալիստական հասարակարգում նախ և առաջ վերացել են այն հակասությունները, որ անցյալում գոյություն ունեին առաջագեմ գրողի և տիրող սոցիալական իրավակարգի միջև: Մեր օրերի առաջագեմ գրողը կոչված է արդեն ոչ թե խաբուելու, այլ հաստատելու սոցիալիստական հասարակարգի զաղափարական և բարոյական հիմունքները, հետևապես նրա հիմնական խնդիրը դառնում է ոչ թե «կյանքի անողոր քննադատությունը», այլ ճիշտ հակառակը. կյանքում ստեղծված նորի, դեպի գալիքը ձգող առողջ տենդենցների հաստատումը: Իհարկե, դա չի նշանակում, թե սոցիալիստական ռեալիզմի ուղղության հետևող գրողը չի կարող կամ չպետք է քննադատի կյանքում գոյություն ունեցող այս կամ այն բացասական երևույթը, Ընդհակառակը, նա այդ պարտավոր է անել. եթե ուզում է պայքարել նորի հաստատման համար, որովհետև այն ամենը, ինչ հնից, բացառությունից է գալիս, խանգարում է նորի առաջընթացին, և պետք է խաբազանել ու մերկացնել այն, սակայն այդ քննադատությունը արդեն ոչ թե հիմնական ու զլխավոր խնդիր է սոցիալիստական ռեալիզմի ուղղության գրողի համար, այլ երկրորդական, ստորագրային:

* * *

Իմե Ս. Պալաթոնը լուրջ վրիպումներ և սայթաքումներ է կատարում՝ խոսելով սովետահայ գրականության ընդհանուր տեսական հարցերի մասին, և երբեմն չգիտակցված ձևով կրկնում մտքեր ու տեսակետներ, որոնք խորթ են իր իսկ ընդհանուր կողմնորոշմանն ու բմբռնումներին, ապա միանգամայն այլ է պատկերը, երբ նա խոսում է կոնկրետ գրողների ու գործերի մասին: Այստեղ Ս. Պալաթոնը ցուցաբերում է ոչ միայն առավել ինքնուրույնություն նյութի շարադրման և վերլուծումների մեջ, այլև նուրբ դիտողականություն: Հաճախ գրական այս կամ այն երևույթին նա տալիս է ճիշտ, սուր և դիպուկ բնութագրումներ: Այսպես, օրինակ, չի կարելի չհամաձայնել հեղինակի պատմական թեմատիկայի կապակցությամբ սրած մի շարք միանգամայն իրավացի դիտողությունների հետ, երբ նա խոսում է Ս. Տարոնցու, Հովհ. Շիրազի, Աշ. Գրաշու և այլ հեղինակների պատմական թեմատիկային նվիրված գործերի մասին. «Պատմությունը հատուկ ենթադրանք է, — գրում է հեղինակը, — հեղա-

փոխական հոստորի մը համար: Սակայն գեղարվեստական տեսակետով, անիկա ծերանոց մըն է... Պատմության մեջ ոգևորության աղբյուր որոնող հեղինակը, կամա թե ակամա, պատմության կը մատեն ինքզինքը: ...Տարոնցին կը մնան միայն արդիական և լիրիքական հենք ունեցող բանաստեղծությունները, որոնք բեղմնավորված են կենդանի մարդու հույզերով, ապագայի թովիչ երազանքներով»:

Ողջունելի է հեղինակի անսահման լավատեսությունը սովետահայ գրականության նկատմամբ առհասարակ. քաղաքացիական հայ գրականության պատմությունը երբեք տեսած չէր այսքան մեծ սկզբնավորություններ, այսքան մեծ նվաճումներ, այսքան այլազան գրողներու զմայլելի հույլեր. ինչ որ տեսավ մեր սերունդը, ինչ որ ունեցավ մեր վերածնված հայրենիքը՝ իր գոյության քանի մը տասնամյակներու ընթացքին»:

Միանգամայն ճիշտ են հեղինակի քաղաքիվ պնդումներն արդիական թեմատիկայի անհրաժեշտության մասին, ինչպես և գրականության ուղադրության կենտրոնում մշտապես այժմեականության խնդիրները պահելու նրա պահանջը: Այդ տեսակետից իրավացի է Ս. Պալաթոնը, երբ սփյուռքահայ գրականության հետ մնալու կարևոր պատճառներից մեկն էլ համարում է այդ գրականության կտրվածությունը իր ժամանակի կենսահույզ հարցերից. «գաղթահայ գրականությունը հետ մնաց իր ապրած պատմաշրջանին՝ կես դարով, — գրում է նա: — Անիկա շարունակ մնալով Հ. Օշականի վնասակար ազդեցության տակ, քանաց միայն լիրիկ լայնացալի փշրանքները», որուն հետևանքով անտեսեց ներքին պատկերելու անհրաժեշտությունը: Անցյալի խլացնելուն կառչելու ախտավոր սովորամոլությունը առաջ բերավ լճացում, քաղաքացում...»:

Սակայն որքան ճիշտ է Ս. Պալաթոնի այս դրույթը, նույնքան խոցելի են նրա բացարձակ հոգևոր ու արտաքին դատողությունները սփյուռքահայ ներկա գրականության և նրա զարգացման հեռանկարների մասին: Հեղինակը այդ գրականությունը համարում է «կոքսույան մատնված», «ամայի անապատ», «քայքայման և դանդաղ մահացման» ենթակա: Այս որակումները, կարծում ենք, հեռու են ճշմարտությունից: Սփյուռքահայ գրականության առողջ և կենսունակ թևը լուրջ նվաճումներ է արձանա-

¹ Ս. Պալաթոն, նշվ. աշխ., էջ 73—76:

² Նույն տեղում, էջ 123:

³ Նույն տեղում, էջ 97:

⁴ Նույն տեղում, էջ 97, 120—121:

գրել մանավանդ վերջին տարիների ընթացքում, նա կանգնած է զարգացման ճիշտ ճանապարհի վրա, նա ունի լուսավոր ապագա:

Անընդունելի են նաև հեղինակի անառարկելի տոնով արված մի շարք պնդումները սովետահայ այս կամ այն գրողի ստեղծագործական ներկայի և ապագայի նկատմամբ: Առանձին գրողների կամ գրողների մի ամբողջ խմբի մասին վաղաժամ հետևություններ անել, ասելով, թե ասպառած են իրենց կամ եղադրած են այլևս ստեղծագործելու¹, սխալ է: Քննադատը կարող է ամենախիստ որակումներ տալ գրողի այս կամ այն կոնկրետ գործին, ենթարկել այն խիստ քննադատության, սակայն ստանձնել

կանխագուշակողի դեր և դատավճիռ արձակել գրողի ստեղծագործական ապագայի նկատմամբ, սա արդեն չափազանցություն է: Մանավանդ, որ հայտնի է, թե ստեղծագործական պրոցեսը այնպիսի բարդ երևույթ է, լի անակրեկալներով, որ ամենահանճարեղ քննադատն անգամ ոչինչ կանխագուշակել չի կարող այդ մասին:

Չնայած մի շարք լուրջ թերություններին, այնուամենայնիվ այս գիրքը, որպես անդրանիկ իր տեսակի մեջ, արժանի է ուշադրության և կկատարի դրական դեր սփյուռքահայ ընթերցողին սովետահայ գրականության հետ մոտիկից ծանոթացնելու գործում:

¹ Ս. Պալարոն, նշվ. աշխ., էջ 69 և հտ:

ՀՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, *Մարտիրոս Ղրիմեցի*, Հայկական ՍՍՌ-ի ԳԱ հրատարակչություն, Երևան, 1958:

Հայ հին ու միջնադարյան բազմահարուստ գրականության շատ ու շատ հուշարձաններ գեոսես չեն հրատարակված և գտնվում են ձեռագիր ձևով մոզմաների էջերում: Հարյուրավոր հեղինակներ, որոնք, ճիշտ է, ասեղծագործական մեծ տաղանդ հանդես չեն բերել, բայց իրենց կարողությունների համեմատ նպաստել են գրականության ու կուլտուրայի զարգացմանը՝ միայն անունով են հայտնի:

Միջնադարյան գրականության գեոսես ձեռագրերում գտնվող հուշարձանների հրատարակությունն ու մեկնադրական ուսումնասիրությունը մի կարևոր խնդիր է, առանց որի հնարավոր չէ այդ գրականության զարգացման պատկերը ներկայացնել իր ամբողջության մեջ ու իր հիմնական մոմենտներով:

Միանգամայն ճիշտ է Մարտիրոս Ղրիմեցիին աշխատության հեղինակը, երբ կրկնում է Մ. Արեղյանի նկատողությունը, թե՛ «Հայ հին գրականության, մասնագրության գիտական պատմություն ստեղծելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ներկայացնել գրական առանձին գեմբերը՝ ցրիվ և ձեռագրային նոր նյութերն ի մի բերելով և հրատարակելով» (էջ 7):

Պետք է նշել, որ վերջին տարիներում զգալի քայլեր են արվում այդ ուղղությամբ՝ հրատարակվում են միջնադարյան մասնագիրների, փիլիսոփաների, տաղերգուների բնագրերը՝ ամփոփված համապատասխան հետազոտությամբ: Հայկական ՍՍՌ Մասնագրության լույս թնայած գրքերի կողքին այս տարի գրվեցին Գիտու-

թյունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի հրատարակած այդպիսի երեք աշխատություն¹, որոնցից մեկն է գրախոսվող գիրքը:

Գիրքը բաղկացած է երեք բաժնից՝ «Մարտիրոս Ղրիմեցի» խորագրեր կրող ուսումնասիրությունից, Ղրիմեցու ստեղծագործության բնագրերը ներկայացնող մասից և բանասիրական ու մասնագրական տեղեկություններ պարունակող ծանոթագրություններից:

Երկրորդ բաժնում գրված են Ղրիմեցու երկերի համեմատական տեքստերը Մարտիրոս Ղրիմեցուց, մինչև այս աշխատությունը, հայտնի էին ընդամենը ինը տաղ: Մարտիրոսյանի գրքում հրատարակված են նրա քսան տաղերը և տեղեկություններ են արվում եւ 25 զանազան գործերի մասին, որոնք չեն մտել հրատարակության մեջ:

«Բնագրեր» բաժինն հաջորդում են ընդարձակ ծանոթագրությունները Այստեղ տեղեկություններ են արվում Ղրիմեցու ստեղծագործությունների սույն մոզմանում գրված և նրանից զուրկ մնացած տաղերների, ձեռագրերի մասին, ինչպես և արվում են բանասիրական գիտազոտություններ, պարզվում երկերի գրություն ժամանակը, Ղրիմեցու կենսագրության հետ կապված զեպքեր և այլն: «Ծանոթագրություն-

¹ Մ. Ք. Ավգուրեզյան, Զուլատուր Գեյսե-սեցի, Արմենուհի Արապյան, Հովհաննես Երզնկացի, Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի: